

Թէոդոսի վանքին և Ս. Տեղեաց մէջ հայ լեզուաւ սաղմոսերգութեան և պաշտամունքի թոյլտուութիւնը շարունակութիւնն էր նախընթաց տարիներու կանոնական սովորութեանց:

Միջանկեալ այս կէտը փակելով՝ շարունակենք Թէոդոսի վանքին պատմական մասը: Նոյն վանքը 614ին, Պարսից արշաւանաց ժամանակ, չենք կարծեր որ զերծ մնացած ըլլայ աւերումներէ. նոյն ատեն վանքին վանահայրն էր Մոտեստոս, որ Երուսաղէմի աթոռին տեղապահ կարգուեցաւ և անոր վիճակուեցաւ կործանուած եկեղեցիները վերաշինել: Բնական էր որ Մոտեստոս ամենէն աւելի պիտի անդրադառնար իր վանքին վերանորոգութեան: 808ին Commematorium de Casis Dei խորագրով գրուած յիշատակարան մը կը վկայէ թէ այս թուականին, Թէոդոսի վանքին մէջ կ'ապրէին 70 վանականներ. կը նշկարագրէ Սարակինոսաց գործած աւերները. իսկ 809 և 813ին, Թէոփանէս պատմիչին համաձայն, նոյն վանքը ամբողջովին աւերակ դարձած էր, կրօնաւորներէն ոմանք փախած են Կիպրոս, այլք Կ. Պոլիս, ուր Միքայէլ կայսրը լաւ ընդունելութիւն ըրած է անոնց: Այս թուականէն յետոյ մասամբ մը կը նորոգուի վանքը և կը սկսի կրօնաւորական կեանքը. այնպէս որ մինչև ԺԲ-ԺԴ դար այցելող յոյն և լատին ուղեգիրներ կանգուն կը գտնեն վանքը. և ԺԵ-ին ան դարձեալ աւերեալ վիճակ մը ունեցած է (ՏԵՍ Revue de l'Orient Chrétien. 1900, էջ 286-289): Այս կործանումներու մէջ անմիջապէս կը մնայ միայն Մոզեռու Քառայրը, որ եկեղեցիի վերածուած է, յատակը մոզայիք, պատերուն մէջ ազուցուած են Աբբայ Թէոդոսի և ուրիշ բարեպաշտ կանանց հետ Թէոդոսի մայրը և Մար-Սարայի մայրը:

Թէոդոսի վանքին մէջ ապրող նշանաւոր վանականները կը ներկայացնեն հոս, Յովհաննէս Մոսքոսի Մարգ հոգեւոր գիրքէն քաղելով և իւրաքանչիւրին քով նշանակելով գիրքին ա'յն գլուխները՝ ուր կը կարգացունեն անոնց անունները.

Աւռնդիոս Արքա (C)

Կոնովկ Կիլիկեցի (IV)

Թեոսուդոս, ծեր զօրական մը՝ որ մենակեաց կ'ըլլայ (XXIII)

Գեորգ Վանական, առաջնորդ Թէոդոսի վանքին (XCII)